Գայանե Հովհաննիսյան

ԵԼԻԶԱՎԵՏՊՈԼԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Բանալի բառեր. Ելիզավետպոլի նահանգ, Առաջին աշխարհամարտ, ռուսական հեղափոխություններ, հայ բնակչություն, ժողովրդագրական պատկեր:

Պատերազմները ու ռազմական բախումները ժողովրդագրական փոփոխությունների և տեղաշարժերի վրա ազդող կարևոր գործոններ են: Ընդ որում, դրանց բացասական ազդեցությունը բնակչության վրա արտահայտվում է ոչ միայն ուղղակի մարդկային կորուստներով, այլ նաև անուղղակիորեն՝ ժողովրդագրական այնպիսի բացասական հետևանքներով, ինչպիսիք են վերարտադրման պայմանների վատթարացումը, բնակչության սեռատարիքային կազմի անհամաչափությունը, վերարտադրողականության կարող բնակչության թվաքանակի կրճատումը, ամուսնությունների և ծնելիության մակարդակի նվազումը, հիվանդությունների ու մահացության աճը և այլն:

Նմանօրինակ բացասական հետևանքերով և մարդկային հսկայական կորուստներով առանձնացավ 1914 թ. բռնկված Առաջին աշխարհամարտը: Մասնագետների կարծիքով, պատերազմին զոհ է գնացել ավելի քան 20,5 միլիոն, վիրավորվել ու հաշմանդամ է դարձել շուրջ 18,3 միլիոն մարդ[1]: Տարբեր հաշվարկներով պատերազմող պետություններում Առաջին աշխարհամարտի հետևանքով չծնվեց շուրջ 20 միլիոն մարդ[2]:

Մինչև Առաջին համաշխարհային պատերազմի բռնկումը Ելիզավետպոլի նահանգը հանդիսանում էր անդրկովկասյան տարածաշրջանում հայ ժողովրդի բնակության ամենախիտ կենսատարածքներից էր՝ այդ ցուցանիշով զիջելով միայն Երևանի նահանգին: Ռուսաց կայսր Ալեքսանդր II-ի՝ 1867 թ. հրամանագրով ստեղծված այս վարչամիավորի կազմում մտնում էին Բաքվի նահանգի Նուխիի և Շուշիի, Թիֆլիսի նահանգի Ելիզավետպոլի և Երևանի նահանգի Օրդուբադի գավառների մի մասը: Հյուսիսում այն սահմանակցում է Թիֆլիսի նահանգին, Զաքաթալայի օկրուգին և Դաղստանի մարզին, արևելքում՝ Բաքվի նահանգին, իսկ հարավում՝ Արաքս գետով Պարսկաստանին: Նահանգը բաղկացած էր ութ գավառից՝ Արեշի, Ելիզավետպոլի, Զանգեզուրի, Կարյագինոյի (Զեբրայիլ), Ղազախի, Նուխիի, Շուշիի և Ձևանշիրի[3]: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին՝ 1914 թ. հունվարի դրությամբ, Ելիզավետպոլի նահանգի ամբողջ բնակչությունը կազմում էր 1175836 մարդ, որի 33.7%-ը կամ 396815-ը հայեր էին[4]:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ելիզավետպոլի նահանգի հայ բնակչության կրած կորուստների մասին արժեքավոր տեղեկություններ են պահպանվել արխիվային փաստաթղթերում: Այսպես. համաձայն մի վավերագրի՝ պատերազմի ընթացքում թուրքական զորքերի ու թաթարական հրոսակախմբերի կողմից ավերածությունների էր ենթարկվել նահանգի 72 հայկական գյուղ՝ ընդհանուր 9173 տնտեսությամբ, որից 3 գյուղ՝ 866 տնտեսությամբ Ղազախի գավառում, 15 գյուղ՝ 2072 տնտեսությամբ Արեշի գավառում, 25 գյուղ՝ 3866 տնտեսությամբ Նուխիի գավառում, 19 գյուղ՝ 1535 տնտեսությամբ Շուշիի գավառում և 10 գյուղ՝ 834 տնտեսությամբ Ձևանշիրի գավառում[5]:

---

[1] Տե՛ս Մելքոնյան Ա., Առաջին աշխարհամարտ-Հայոց ցեղասպանություն. պատճառներ և հետևանքներ, «Պատմաբանասիրական հանդես», 2014, N 3, էջ 6:

[2] Տե՛ս Жиромская В., Влияние Первой мировой войны на демографические процессы в России, http://www.demoscope.ru/weekly/2014/0623/analit02.php (հասանելի է 13.02.2018):

[3] Տե՛ս «Обзор Елисаветпольской губернии за 1913 год», Тифлис, 1915, ст. 11:

[4] Հաշվարկները կատարված են ըստ 1915 թ. «Кавказский календарь»-ի տվյալների, տե՛ս «Кавказский календарь на 1915 год», пространство и население Кавказского края к 1-му января 1914 г., Тифлис, 1914, ст. 226-233:

[5] Տե՛ս Հայաստանի Ազգային Արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 199, թ. 124 շրջ.:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում նահանգում տարածված էին նաև վարակիչ հիվանդությունները: Ի մասնավորի, միայն 1916 թ. ապրիլ-նոյեմբեր ամիսներին արձանագրվել էր 854 վարակիչ հիվանդություն, որի հետևանքով մահացել էր 117 մարդ (տեղի բնակչությունից հիվանդացել էին 447-ը, մահացել՝ 87-ը, իսկ զինվորականներից հիվանդացել էին 407-ը, մահացել՝ 30-ը): Ըստ վերոհիշյալ փաստաթղթի՝ մահացության առավել բարձր գործակից են ունեցել տիֆ, կարմրուկ և խոլերիա հիվանդությունները[1]:

Նահանգի տարածքում հայ բնակչության տեղաշարժերի մասին խոսելիս չպետք է մոռանալ, որ Առաջին աշխարհամարտի տարիներին թուրքական իշխանությունների կողմից կազմակերպված ցեղասպանությունից մազապուրծ հարյուրհազարավոր հայերի մի ստվար հատված իր փրկությունը գտավ Արևելյան Հայաստանում, այդ թվում՝ Ելիզավետպոլի նահանգում: Այսպես՝ ըստ Ադրբեջանում ՀՀ խնամատարության նախարարության ներկայացուցիչ Զ. Գեղամյանի մի զեկուցագրի միայն Ելիզավետպոլի (Գանձակ) գավառի հայկական գյուղերում 1915 թ. ապաստան էին գտել շուրջ 3000 արևմտահայեր[2]:

Արդեն 1916 թ. վիճակագրական տվյալների համաձայն Ելիզավետպոլի նահանգի հայ բնակչության թիվը հասնում էր 418859-ի՝ կազմելով երկրամասի ընդհանուր բնակչության 32.8%-ը: 1914 թ. համեմատությամբ հայ բնակչությունը ավելացել էր 22044-ով (աճման տեմպը՝ 5.5%): Պայմանավորված խոշոր առևտրա-արդյունաբերական կենտրոնների բացակայությամբ՝ հայ բնակչության ճնշող մեծամասնությունը տեղաբաշխված էր գյուղերում. նահանգի տարածքում գավառական հայ բնակչությունը կազմում էր 373605 մարդ կամ 89.1%-ը: Քաղաքներում բնակվում էր հայ բնակչության միայն 10.9%-ը կամ 45254 մարդ (տե՛ս աղյուսակ 1 և 2)[3]:

Աղյուսակ 1. Ելիզավետպոլի նահանգի գավառական հայ բնակչությունը 1916 թ.

Գավառներ	Ամբողջ բնակչություն	Հայ բնակչություն	Տոկոս. հարաբ.
Արեշ	99400	19161	19.2%
Ելիզավետպոլ	214746	56589	26.3%
Զանգեզուր	224197	99331	44.3%
Կարյագինո	89584	21755	24.2%
Ղազախ	137049	61597	44.9%
Նուխի	133505	17751	13.2%
Շուշի	144876	75413	52%
Ջևանշիր	75730	22008	29%
Ընդամենը	1119087	373605	37.5%

Աղյուսակ 2. Ելիզավետպոլի նահանագի քաղաքային հայ բնակչությունը 1916 թ.

Քաղաքներ	Ամբողջ բնակչություն	Հայ բնակչություն	Տոկոս.հարաբեր.
Գերյուսի	2201	1724	78%
Ելիզավետպոլ	52243	8009	15.3%

[1] Տե՛ս նույն տեղում, ֆ. 227, g. 1, գ. 630, թ. 14:
[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 205, g. 1, գ. 533, թ. 3:
[3] Հաշվարկները կատարված են ըստ 1917 թ. «Кавказский календарь»-ի տվյալների, տե՛ս «Кавказский календарь на 1917 год», пространсво и население Кавказского края к 1-му яняаря 1916 года, Тифлис, 1916, ст. 190-197:

Նուխի	57731	12125	21%
Շուշի	43869	23396	53.3%
Ընդամենը	156044	45254	29%

Ինչ վերաբերում է հայ բնակչության սեռային կազմին, ապա հարկ է նկատել, որ քննարկվող ժամանակաշրջանում այն որոշակի փոփոխությունների էր ենթարկվել: Հայտնի է, որ Անդրկովկասը պատկանում է այն տարածաշրջանների թվին, որտեղ արական սեռը զգալիորեն գերազանցում է իգականին: Նախապատերազմյան շրջանում Անդրկովկասի գավառներում սեռերի հարաբերակցությունը կազմում էր 88 կին յուրաքանչյուր 100 տղամարդու հաշվով, իսկ քաղաքային միջավայրում՝ 77 կին[1]: Պատերազմի տարիներին արական սեռի թվական գերազանցությունը իգական սեռի հանդեպ զգալիորեն նվազեց: 1916 թ. տվյալներով հայ բնակչության շրջանում սեռերի հարաբերակցությունում կանանց համամասնությունն արդեն տարածաշրջանին բնորոշ միջին ցուցանիշից ավելի բարձր էր, հատկապես քաղաքային բնակչության շրջանում (տե՛ս աղյուսակ 3 և 4)[2]: Նահանգի հայ բնակչության սեռային կազմը բաշխված էր գրեթե հավասարաչափ. նրա 52.7%-ը կամ 220753 մարդ արական սեռի ներկայացուցիչներ էին, իսկ 47.3%-ը կամ 198106-ը՝ իգական:

Աղյուսակ 3. Ելիզավետպոլի նահանգի գավառական հայ բնակչության սեռային կազմը 1916 թ. դրությամբ.

Գավառներ	Տղամարդ	Կին	Սեռային հարաբերակցություն (100 տղամարդու հաշվով)
Արեշ	10226	8935	87
Ելիզավետպոլ	28549	28040	99
Զանգեզուր	49300	50031	101
Կարյագինո	10266	11489	112
Ղազախ	34436	27161	79
Նուխի	9896	7855	79
Շուշի	41586	33827	81
Ձևանշիր	11942	10066	84
Ընդամենը	196201	177404	90

Աղյուսակ 4. Ելիզավետպոլի նահանգի քաղաքային հայ բնակչության սեռային կազմը 1916 թ. դրությամբ.

Քաղաքներ	Տղամարդ	Կին	Սեռային հարաբերակցություն (100 տղամարդու հաշվով)
Գերյուսի	850	874	103
Ելիզավետպոլ	5353	6772	126
Նուխի	4412	3597	82

[1] Տե՛ս Իշխանեան Բ., Վիճակագրական ուսումնասիրութիւն Անդրկովկասեան ժողովուրդների: Առաջին մաս. Ժողովուրդների տերիտորիական բաժանումները և նրանց աճումը Անդրկովկասում, Բագու, 1919, էջ 68-69:

[2] Հաշվարկները կատարված են ըստ 1917 թ. «Кавказский календарь»-ի տվյալների, տե՛ս «Кавказский календарь на 1917 год», նույն տեղում:

Շուշի	13937	9459	68
Ընդամենը	24552	20702	95

Նման պատկերը պետք է բացատրել պատերազմական դրության, նաև՝ հայ բնակչության շրջանում մեծ տարածում ունեցող աշխատունակ տարիքի տղամարդկանց մեծածավալ արտագաղթի հետևանքով առաջացած սեռային կազմի հարաբերակցություն:

Անհրաժեշտ է նկատել, որ հետպատերազմյան ժամանակաշրջանում վիճակագրական ամբողջական տվյալների բացակայությունը հնարավորություն չեն տալիս համակողմանիորեն ներկայացնելու նահանգի հայ բնակչության թվաքանակի փոփոխությունները՝ նախապատերազմյան ժամանակաշրջանի համեմատությամբ: Այնուամենայնիվ, պահպանված տվյալներից պարզ է դառնում, որ նահանգի տարածքում հայ բնակչությունը զգալիորեն նվազել է հատկապես 1917 թ. ռուսական հեղափոխություններից հետո տարածաշրջանում ծավալված ռազմաքաղաքական իրադարձությունների հետևանքով: Չպետք է մոռանալ այն հանգամանքը, որ Անդրկովկասյան Սեյմի լուծարումից և անկախության հռչակումից (1918 թ. մայիս) հետո տարածաշրջանի երեք հանրապետությունների միջև ի սկզբանե առաջացան տարածքային-սահմանային մի շարք խնդիրներ: Հատկապես կնճռոտ էր հայ-ադրբեջանական հակասությունները, որտեղ Ելիզավետպոլի նահանգն իր ուրույն տեղն էր գրավում: 1918-1920 թթ. Ադրբեջանի Հանրապետության կողմից նահանգի մի շարք գավառներում կազմակերպվեցին հայ բնակչության զանգվածային ջարդեր, որոնց հետևանքով նախկինում հայաբնակ մի շարք շրջաններ գրեթե ամբողջապես հայաթափվեցին[1]:

Հետպատերազմյան ժամանակաշրջանում նահանգի առավել հայաբնակ շրջաններում բնակչության թվի կտրուկ նվազման մասին է վկայում Առաջին համաշխարհային պատերազմում հայերի կորուստները որոշող բյուրոյի՝ Ելիզավետպոլի նահանգի վերաբերյալ կազմած տեղեկագրի[2] և 1912 թ. ռուսական վիճակագրական տարեգրքի[3] տվյալների համեմատությունը (տե՛ս աղյուսակ 5):

Աղյուսակ 5. Ելիզավետպոլի նահանգի գավառական հայ բնակչության աճման տեմպը 1912-1919 թթ.[4]

Գավառներ	1912 թ.	1919 թ.	Աճման տեմպը 1912-1919 թթ.	
	Հայ բնակչության թիվը	Հայ բնակչության թիվը	Բնակչություն	Տոկոս.հարաբ.
Արեշ	15880	13848	-2032	-12.8%
Ելիզավետպոլ	44327	36734	-7593	-17%
Զանգեզուր	62412	47801	-14611	-23.4%
Կարյագինո	9523	6817	-2706	-28.4%
Ղազախի	58532	48672	-9860	-16.9%

[1] Մանրամասն տե՛ս Ստեփանյան Գ., Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Նուխի և Արեշ գավառներում 1918-1920 թթ., «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», 2002, № 5, նույնի՝ «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ.», Ե., 2003:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 221, ց. 1, գ. 254, թ. 1-25:

[3] Տե՛ս "Памятная книга Елисаветпольской губернии", приложение к памятной книге Елисаветпольской губернии на 1914 год: таблица об экономическом состоянии городского крестьянского населения, по свидениям, относящимся к 1912 году, собранным Начальниками полиций и Мировыми Посредниками Елисаветпольской губернии, Тифлис, 1910-1914, ст. 2-170:

[4] Վիճակագրական տվյալները վերաբերում են Ելիզավետպոլի նահանգի 8 գավառների միայն առավել հայաբնակ գյուղական համայնքներին: Համեմատությունը 1912 թ. ռուսական տարեգրքի հետ կատարված է ըստ համապատասխան տարածքային ընդգրկման:

Նուխի	12657	11040	-1617	-12.8%
Շուշի	60675	55327	-5348	-8.8%
Ձևանշիր	21151	20874	-277	-1.3%
Ընդամենը	285157	241113	-44044	-15.4%

Ինչպես նկատելի է աղյուսակից, նախապատերազմյան շրջանի համեմատությամբ Ելիզավետպոլի նահանգի առավել հայաբնակ շրջանների գավառական հայ բնակչությունը կրճատվել էր 44044 մարդով կամ 15.4%-ով: Ընդ որում նվազման ամենաբարձր ցուցանիշն ունեն Ելիզավետպոլի, Զանգեզուրի և Կարյագինոյի գավառները:

Ընդհանրացնելով, կարող ենք ասել, որ Առաջին համաշխարհային պատերազմը և հատկապես 1917 թ. ռուսական երկու հեղափոխություններից հետո տարածաշրջանում ստեղծված անկայուն ռազմաքաղաքական իրավիճակը ու միջէթնիկ բախումները բացասական հետևանքներ ունեցան Ելիզավետպոլի նահանգի հայ բնակչության ժողովրդագրական պատկերի վրա՝ հանգեցնելով վերջինիս սեռային կազմի, թվաքանակի և տեղաշարժերի փոփոխության ու տեսակարար կշռի նվազման:

Гаяне Оганнисян, Армянское население Елизаветпольской губернии во время Первой мировой войны. В статье рассмотрены отрицательные последствия Первой мировой войны и нестабильной политической ситуации на демографической картине армянского населения Елизаветпольской губернии. Эти события привели к изменению в половом составе, а также к снижению доли армянского населения в общей численности населения губернии.

Ключевые слова: Елизаветпольская губерния, Первая мировая война, российские революции, армянское население, демографическая картина.

Gayane Hovhannisyan, The Armenian population of Elizavetpol Province during the First World War. The article describes the negative consequences of the First World War and the unstable political situation for the demographic picture of Armenian population of the Elizavetpol Governorate. These events led to a change in the sex composition, as well as to a decrease in the proportion of the Armenian population in the total population of the Governorate.

Key words: Elizavetpol Governorate, First World War, Russian revolutions, Armenian population, demographic picture.